ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

## 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

## DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
## Challenges and Opportunities of 21st Century

## РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
## вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

*Հրատարակվում է*
*ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ*

***Խմբագրական խորհրդի նախագահ՝***

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**
*ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

***Խմբագրական խորհուրդ՝***

**ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
**ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
**ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և**
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

# ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

*Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,*

*շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:*

*Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:*

*Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:*

*Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:*

*Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:*

*Շնորհակալ եմ ուշադրության համար:*

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**
*ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր*

**ԳԱԳԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ**
*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ*

# ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

*Հիմնաբառեր.* *կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, հեղինակություն, բարեգործություն, համբավ, գործարարություն, մրցունակություն, կյանքի որակի արդյունավետ կառավարում*

*Ներկայումս կորպորատիվ սոցիալական պատասխանատվության թեման գնալով ավելի ու ավելի պահանջված է դառնում գործարար հասարակության շրջանակներում: Հոդվածում դիտարկվում է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության դերը ժամանակակից բիզնես գործընթացներում: Ներկայացված են կորպորատիվ սոցիալական պատասխանատվության այն հիմնական ուղղությունները, որոնք նպաստում են գործարար միջավայրում կազմակերպությունների մրցունակության և գործունեության արդյունավետության բարելավմանը:*

Ժամանակակից համաշխարհային տնտեսության զարգացման գործընթացներում տեղի են ունեցել զգալի փոփոխություններ՝ տնտեսության արագընթաց տեմպերով գլոբալացում, գործարարության և տնտեսական կապերի միջազգայնացում, մարդկանց կյանքի բոլոր առումներով որակական փոփոխություններ, մասնավոր հատվածի և պետության միջև փոխհարաբերություններ: Ահա նոր իրողությունների ոչ լրիվ ցանկը, որտեղ գլխավոր միտումը փոփոխությունների արագացումն է: Փոփոխվում են ինչպես կորպորացիաների, այնպես էլ պետական կառավարման մարմինների գործունեության հանգամանքները՝ նպատակները, զարգացման գերակայությունները, ֆինանսական միջավայրը, հասարակական կյանքի բարելավման եղանակները: Այս պայմաններում, ըստ էության, լուրջ վերափոխման են ենթարկվել պետության, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի դերակատարումները: Առաջին պլան է մղվել մասնավոր հատվածը, մասնավորապես՝ այնտեղ, որտեղ պետությունն ի վիճակի չէ միայնակ հաղթահարելու որոշակի մեծածավալ հիմնախնդիրներ: Իհարկե, մասնավոր հատվածն ինքն իրենով չի կարող և չպետք է փոխարինի պետությանը հասարակական հարաբերությունների կարգավորման գործընթացում, սակայն իշխանության պետական մարմինները պետք է մանրամասն ուսումնասիրեն և օգտագործեն այս բնագավառում բիզնեսի հնարավորությունները, առաջավոր և նորարարական փորձը: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կարգավորվող շուկայական հարաբերությունների պայմաններում պետությունը չի կարող գոյություն ունենալ առանց բիզնեսի, ինչպես և բիզնեսը՝ առանց պետության աջակցության: Պետության և բիզնեսի գործընկերության

ինստիտուտը կարող է դիտարկվել որպես հանրային ծառայությունների մատուցման գործընթացում մասնավոր հատվածի ներգրավման կառուցակարգ, ինչպես նաև պետական կարգավորման համակարգի մաս, որն ապահովում է արդյունաբերական քաղաքականության իրականացում, նորամուծական ակտիվության խրախուսում, ենթակառուցվածքների և սոցիալական ոլորտներում ներդրումների ներգրավում:

Պետության և բիզնեսի արդյունավետ փոխհարաբերություններում էական նշանակություն ունեն, այսպես կոչված, «խաղի կանոնները», որոնք կոչված են ապահովելու ձեռնարկատիրական գործունեության խրախուսումը, տնտեսավարող սուբյեկտների ներուժի արդյունավետ օգտագործման համար առավելագույն նպաստավոր պայմանների ստեղծումը: Մի կողմից՝ պետությունն ու հասարակությունն են շահագրգռված երկրի կայուն զարգացման, սոցիալական և տնտեսական ծրագրերին անհրաժեշտ միջոցների ավելացման և արդյունավետ քաղաքականության իրականացման համար, իսկ մյուս կողմից՝ բիզնեսը հետաքրքրված է բնակչության եկամուտների և սպառողական ակտիվության աճի, մասնավոր հատվածի նկատմամբ կայուն պետական քաղաքականության իրականացման, ինչպես նաև այն կորպորացիաների հասարակական ճանաչման և աջակցման հարցերով, որոնք կարևորում են կորպորատիվ սոցիալական պատասխանատվության սկզբունքների կիրառումը և իրականացնում են սոցիալական ներդրումներ:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգի հիմնական գաղափարները և սոցիալապես պատասխանատու վարքագծի միջոցով այն իրականացնելու մոտեցումները կիրառվել են դեռևս անցյալում:

Սկզբնական շրջանում սոցիալական պատասխանատվությունն առանձնանում էր մարդասիրության և բարեգործության դրսևորումներով: Այդ ժամանակաշրջանում գործարար և սոցիալական ակտիվությունը տարանջատված էին: Սոցիալապես նշանակալից հարցերի լուծման համար օգնությունը տրամադրվում էր գերազանցապես բնաիրային կամ դրամական ձևով՝ բիզնես կառույցի սեփականատերերի կամ ղեկավարների անձնական համակրանքների հիման վրա: Սակայն, անցյալ դարի վերջերից բիզնեսը սկսեցէ սոցիալական հիմնախնդիրների լուծումը կապակցել կորպորացիաների ռազմավարական նպատակների հետ, ինչն ուղեկցվում է սոցիալական ներդրումների իրականացման պրակտիկայի զարգացմամբ: Այսպիսով՝ պետական և ոչ պետական հատվածների ջանքերը են միավորվում են որոշակի կոնկրետ սոցիալական հիմնախնդիրների լուծման նպատակով:

Ներկայումս կորպորատիվ սոցիալական պատասխանատվության թեման գնալով ավելի ու ավելի պահանջված է դառնում գործարար հասարակության շրջանակներում: Գրականության մեջ սոցիալապես պատասխանատու վարքագիծը որոշ հեղինակներ ընկալում են, ամենից առաջ, տնտեսական իմաստով, մյուսները՝ որպես իրավաբանական պատասխանատվության հայեցակարգ[1]: Ա. Քերոլլի՝ արդեն դասական դարձած դիրքորոշման համաձայն, բիզնեսում կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը բազմամակարդակ է (տնտեսական, իրավական, բարոյական և մարդասիրական (սոցիա-

[1] Благов Ю. Е., Корпоративная социальная ответственность: эволюция концепции. СПбГУ. – СПб.: Из-во “Высшая школа менеджмента”, 2010.

լական)), որը ներկայացվում է բուրգի տեսքով[1]: Բուրգի հիմքում տնտեսական պատասխանատվությունն է, որն անմիջականորեն պայմանավորված է բիզնեսի կողմից հասարակության պահանջմունքները բավարարող ապրանքների և ծառայությունների տրամադրմամբ, որոնց իրացման արդյունքում ստացվում է վարձատրություն կամ շահույթ: Իրավական պատասխանատվությունը ենթադրում է շուկայական տնտեսության պայմաններում բիզնեսի օրինապահություն, գործունեության համապատասխանություն հասարակության այն սպասելիքներին, որոնք ամրագրված են իրավական նորմերում և կարգավորվում են պետության կողմից: Բարոյական պատասխանատվությունը նույնպես գործարար միջավայրի՝ հասարակության սպասելիքներին համահունչ գործունեությունն է՝ հիմնված ոչ թե իրավական, այլ համընդհանուր ճանաչում գտած բարոյական նորմերի վրա: Սոցիալական (մարդասիրական) պատասխանատվությունը կազմակերպությանը մղում է այնպիսի գործողությունների, որոնք միտված են կամավորության սկզբունքով սոցիալական ծրագրերի իրականացմանը՝ հասարակության բարեկեցության պահպանման ու զարգացման նպատակով:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հիմնական նպատակն է հասարակության կայուն զարգացումը՝ հաշվի առնելով կազմակերպության հիմնական շահագրգիռ կողմերի շահերը և նպաստելով նրանց կյանքի որակի բարձրացմանը: Կազմակերպություններին անհրաժեշտ է զարգացնել շահագրգիռ կողմերի հետ մշտական համագործակցություն՝ որոշումների ընդունման և իրականացման գործընթացում նրանց կարծիքներն ու սպասելիքները հաշվի առնելու նպատակով: Դա կնպաստի կազմակերպության ոչ նյութական ակտիվների ավելացմանը, հեղինակության և ապրանքանիշի ճանաչմանն ու ամրապնդմանը, ինչն անշուշտ կապահովի զգալի տնտեսական արդյունք և կարտացոլվի տնտեսական ցուցանիշներում: Գործարարության արդյունավետության վրա կորպորատիվ սոցիալական պատասխանատվության դրական ազդեցության անուղղակի ապացույցներից է նաև այն փաստը, որ բազմաթիվ խոշորագույն համաշխարհային կորպորացիաներ, միաժամանակ, առաջատար դիրքեր են գրավում կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության դրական ազդեցությունը բիզնես գործընթացներում առավելապես պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- *Համբավի էֆեկտ:* Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում կազմակերպությունների գործունեության ակնկալիքներից է կորպորատիվ հեղինակության բարելավումը: Դա օգնում է ավելացնել սոցիալապես պատասխանատու կազմակերպությունների ոչ նյութական ակտիվները, բարձրացնում է դրանց հեղինակությունը և ձևավորում է վստահության վարկ, ինչը, վերջն արդյունքում, դրական ազդեցություն է ունենում վաճառքի ծավալի ավելացման, գործընկերների և մյուս շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների հետ համագործակցության վրա[2]:

---

[1] https://4brain.ru/blog/%D0%BF%D0%B8%D1%80%D0%B0%D0%BC%D0%B8%D0%B4%D0%B0%D0%BA%D1%8D%D1%80%D0%BE%D0%BB%D0%BB%D0%B0-

[2] Корпоративная социальная ответственность: новая философия бизнеса. Внешэкономбанк Москва, 2011 г.

▪ *Շահագրգիռ կողմերի հետ հարաբերությունների ձևավորում:* Շահագրգիռ կողմերի հետ երկխոսությունը օգնում է կազմակերպություններին պարզել սպասելիքները սոցիալական պատասխանատվության դրսևորումների առումով և, հնարավորության սահմաններում, ինտեգրելու այդ սպասելիքներն իրենց գործունեության մեջ: Արդյունքում կազմակերպությունը ձևավորում է դրական միջավայր՝ շահագրգիռ անձանց լայն շրջանակով, որը նպաստում է բիզնեսի արդյունավետության բարձրացմանը:

▪ *Նորարարությունների ներդրման հնարավորությունների ընդլայնում:* Շահագրգիռ կողմերի պահանջմունքների իմացությունն օգնում է բիզնեսին՝ շուկա ներմուծելու հասարակության կողմից պահանջված ապրանքներ և ծառայություններ, ինչպես նաև յուրացնելու նոր շուկաներ: Այս առումով, բիզնեսը, հիմնական գործունեության շրջանակներում, դառնում է դրական փոփոխությունների և նորարարական ծառայությունների մատակարար՝ դրանով հանդերձ բարձրացնելով իր մրցունակության և արդյունավետության աստիճանը:

▪ *Որակյալ անձնակազմ:* Աշխատանքի գրավիչ պայմանների, մասնագիտական և կարիերայի աճի համար նախադրյալների ու հնարավորությունների ստեղծումը, համամարդկային արժեքների վրա հիմնված կորպորատիվ մշակույթի ձևավորումը նպաստում են կազմակերպությունում որակյալ մասնագետների ներգրավմանը, ինչպես նաև բարձրացնում անձնակազմի կայունությանը և աշխատանքի մոտիվացման (շահադրգվածության) մակարդակը: Ուսումնասիրությունները վկայում են, որ այլ հավասար պայմանների դեպքում աշխատանք փնտրողները իրենց նախապատվությունը տալիս են սոցիալապես պատասխանատու ընկերություններին:

▪ *Ներդրումների ներգրավում:* Արտասահմանյան կապիտալի շուկաներում կազմակերպությունների ներդրումային գրավչությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց գործունեությունը կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում[1]:

▪ *Ոչ ֆինանսական ռիսկերի արդյունավետ կառավարում:* Կառավարչական որոշումների ընդունման գործընթացում բնապահպանական և սոցիալական ուղղությունների միասնացումը կազմակերպությանը թույլ է տալիս ընդլայնել պլանավորման «հորիզոնները», ռիսկերը և հնարավորությունները ավելի բազմակողմանիորեն, ինչը անշուշտ, նախադրյալներ է ստեղծում բիզնեսի կայուն զարգացման համար երկարաժամկետում:

Այսպիսով՝ կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունն աստիճանաբար դառնում է բիզնեսի նոր փիլիսոփայություն՝ ըստ որի կազմակերպությունները, որպես իրենց գլխավոր նպատակ, կարևորում են ոչ միայն շահույթի ստացումը, այլև հասարակության պահանջմունքների բավարարումը և կյանքի որակի բարելավումը:

[1] Նույն տեղում:

**ГАГИК АСЛАНЯН**

## КОРПОРАТИВНАЯ СОЦИАЛЬНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ В ПРОЦЕССЕ РАЗВИТИЯ БИЗНЕСА

***Ключевые слова:*** *корпоративная социальная ответственность, репутация, благотворительность, имидж, бизнес, конкурентоспосбность, качество жизни, эффективное управление*

*В настоящее время тема корпоративной социальной ответственности становится все более востребованной в деловом сообществе. В статье рассматривается роль корпоративной социальной ответственности в современных бизнес процессах. Представлены те основные аспекты корпоративной социальной ответственности, которые в бизнес среде способствуют повышению конкурентоспособности и эффективности деятельности организации.*

**GAGIK ASLANYAN**

## CORPORATE SOCIAL RESPONSIBILITY IN THE PROCESS OF BUSINESS DEVELOPMENT

***Key words:*** *corporate social responsibility, reputation, charity, frame, business, competitiveness, quality of life, effective management*

*Nowadays the subject of corporate social responsibility is becoming more and more demanded within the framework of the business community. The role of corporate social responsibility in modern business processes is considered in the article. There are introduced the key social responsibility aspects, which contribute to the improvement of competitiveness of companies and performance efficiency.*

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԵՐԶՅԱՆ**
*Տնտեսագիտության թեկնածու, ՀՊՏՀ*

## ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՁՄԱԿՈՂՄԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԷԿՈՆՈՄԵՏՐԻԿ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

***Հիմնաբառեր.*** *պետական պարտք, արտաքին պարտք, ներքին պարտք, էկոնոմետրիկա, էկոնոմետրիկ հավասարումներ, էկոնոմետրիկ հավասարումների համակարգեր, կանխատեսումներ, ՀՆԱ, բյուջեի պակասուրդ, տնտեսա-*